



Ձեր բիզնեսի լույսնորսիվը

www.ukzhd.am

ՐՈՒՆՎԱՐ-ՄԱՅԻՍ, 2020 #19 (66)

ՇՆՈՐՀԱՎՈՐ
ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹՈՂԱՅԻՆ

ՀԿԵ ՓԲԸ-ի
թերթ

9
ՄԱՅԻՍ



Հարգելի վետերաններ, գործընկերներ:

Մայիսի 9-ին մենք նշում ենք Մեծ հաղթանակի 75-ամյակը՝ Հայրենական մեծ պատերազմում մեր ընդհանուր Հաղթանակի տարելիցը: Մա իսկապես մեր ընդհանուր Հաղթանակն է, որին ներդրում ունեցան մեր նախնիները: Նախկին Խորհրդային Միության տարածքում գրեթե չկա ընտանիք, որին շրջանցեց պատերազմը: 26 միլիոն կյանք՝ հսկայական գին է, որը վճարեց սովետական ժողովուրդը: Եվ յուրաքանչյուր ընտանիքն ունի իր հերոսները, որոնց հիշում և հարգում են նոր սերունդները: Այս օրը մենք հիշում ենք նրանց, ովքեր մնացել են ռազմաճակատի մարտերում, նրանց, ովքեր պատերազմի ծանր տարիներին աշխատել են թիկունքում, հիվանդանոցներում, գործարաններում,

ովքեր պատերազմից հետո խաղաղ կյանք են հաստատել և շնորհավորում ենք մեր սիրելի վետերաններին, շնորհակալություն հայտնում նրանց մեզ նվիրած խաղաղության համար:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին երկաթուղայինները տեղափոխեցին 20 միլիոն վագոն, ապահովեցին բնակչության և արդյունաբերության թիկունք տարհանման ողջ գործընթացը, վերականգնեցին և վերակառուցեցին 120 հազար կմ ուղի:

Անգնահատելի է հայ ժողովրդի հաղթանակի գործում ներդրումը՝ ավելի քան 60 գեներալ-հայերը գլխավորում էին Կարմիր բանակի խոշոր միավորումները: Իվան Բաղրամյանի, Մերգեյ Խոլոյակովի (Արմենակ Խամֆեյանց), Համազասպ Բաբաջանյանի, Իվան Իսակովի և շատ ուրիշների անունները ընդմիշտ գրված են պատմության մեջ:

Մարտերում ցուցաբերված քաջության և արիության, հմուտ հրամանատարության համար ԽՍՀՄ շքանշաններով և մեդալներով պարգևատրվեցին 70 հազար հայ զինվորներ, սպաներ և գեներալներ: Բարձրագույն պարգևը Խորհրդային Միության Հերոսի կոչումը, շնորհվեց 106 հայ զինվորներին: 27 հայեր դարձան Փառքի շքանշանի լիիրավ կավալեր:

Հայրենական Մեծ պատերազմի ճակատներում կռվում էին շուրջ 600 000 հայ, որոնց կեսը զոհվեց: Պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ում ձևավորվել

են վեց հայկական դիվիզիաներ, որոնք կռիվներով անցել են Կովկասից մինչև Բեռլին: Հատկապես առանձնանում էր 89-րդ հայկական կարմիրադրոշ հրաձգային դիվիզիան՝ հայտնի Թամանյան դիվիզիան, որը մասնակցել է Բեռլինի գրոհին: Ի դեպ, միակը ազգային միավորումներից:

Հայ ժողովրդի տասնյակ հազարավոր որդիներ մասնակցել են ֆաշիստական լծից Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Հարավսլավիայի, Ավստրիայի ազատագրմանը, Ֆրանսիայում և Եվրոպական շատ այլ երկրներում ազատագրական պատերազմին:

Հայրենական Մեծ պատերազմին մասնակցեցին 73 հայ երկաթուղայիններ: Նրանց անունները անմահացան Գյումրիի լույսնորսիվային դեպոյի տարածքում գտնվող Հիշատակի և պատվի պուրակում:

Հարավկովկասյան երկաթուղում իրենց պարտքն են համարում աջակցություն ցուցաբերել վետերան-երկաթուղայիններին, հարգել զոհվածների հիշատակը: Առաջին տարին չէ, որ Հաղթանակի օրվա նախօրեին վերականգնվում են վետերանների տները, նրանց օգնություն ցուցաբերվում: Տարեցտարի վետերանների թիվը պակասում է, և նրանց հանդեպ ամենօրյա հոգատարությունը մեր բարոյական պարտքն է և հարգանքի տուրքը հաղթանակը նվաճածներին:

Շնորհավորում ենք մեր վետերաններին և երկար կյանք մաղթում նրանց: Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր խաղաղ կյանքի հերթական տարվա համար, որը ձեռք է բերված մեր պաշտպանների, Հայրենական Մեծ պատերազմի տարիներին մեր կյանքի իրավունքը պաշտպանած զինվորների շնորհիվ:

«Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության գլխավոր տնօրեն Ա.Վ.Մելիկյան

Կարևոր է

Պարգևավճարները չպետք է ամբողջությամբ կախված լինեն Ճանապարհի արտադրողական ցուցանիշներից

Հուլիսի 1-ից, այսինքն 2020-ի երկրորդ կիսամյակի սկիզբից, ուժի մեջ կմտնի ընկերության Աշխատողների պարգևատրման ակտուալացված կանոնակարգը, որը նախատեսում է պարգևատրման համակարգի փոփոխություններ: Հարավկովկասյան երկաթուղու աշխատողների և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների աշխատավարձերի հաշվարկման կարգի հիմնական փոփոխությունն այն է, որ լիովին բացառվում է աշխատողների պարգևների մակարդակի կախվածությունը ճանապարհի հիմնական ցուցանիշների ատարողականից:

Եթե ներկայումս աշխատավարձից կամ դրույքաչափից պարգևի չափը պետք է ամբողջությամբ ձևավորվի Ճանապարհի արտադրողական ցուցանիշների հիման վրա, այսինքն մատուցված ծառայությունների ծավալի (փոխադրվող բեռների ծավալ և ուղևորների քանակ), ապա փոփոխությունները պարգևավճարը կկապեն աշխատողի անձնական ցուցանիշներին և միակն փոքր չափով՝ այն ձեռնարկության ցուցիչների հետ, որտեղ աշխատում է աշխատակիցը:

Շարունակությունը 3-րդ էջ



Հայաստանը և Համաշխարհային երկրորդ պատերազմը

Հիտլերյան Գերմանիայի կողմից սանձազերծված Երկրորդ համաշխարհային պատերազմը մարդկությանը անթիվ աղետներ և տառապանքներ բերեց:

Այն տասնյակ միլիոնավոր մարդկանց կյանքեր խլեց, Երկրի երեսից ջնջվեցին հարյուրավոր քաղաքներ, հազարավոր գյուղեր և բնակավայրեր: Եվրոպան փլատակներում էր, իսկ Վեստի չափը անհնար է հաշվել: Մակայն ֆաշիստական Գերմանիան, կրելով և իրագործելով համաշխարհային գերիշխանության իր ծրագրերը, հաշվի չառավ գործունեները, որոնք անխուսափելիորեն հանգեցրեցին դրա փլուզմանը:

Հայ ժողովրդի համար 1941-1945 թթ պատերազմը բազմադարյա, պայքարով լի պատմության հերթական փորձություն էր դարձել:

1920 թվականին Հայաստանի բնակչության թիվը կազմում էր ընդամենը 700 հազար մարդ: Պատերազմի նախօրեին այն հասել է մինչև 1,5 մլն մարդ: Այ-



նումանայնիվ հանրապետությունը շարունակում էր մնալ Սովետական Միության ամենասակավաթիվ հանրապետություն դարավոր, լի պայքարի պատմության մեջ մեկ այլ փորձություն (ԽՍՀՄ բնակչության 1,1%): Այնուամենայնիվ, 1941 թվականից մինչև 1945 թվականը ռազմաճակատ էր գնացել ավելի քան 500 հազար մարդ: Հայրենական մեծ պատերազմում Հայաստանն ու հայերը ահռելի կորուստներ կրեցին: Ամեն երկրորդը չէր վերադարձել ռազմաճակատից:

Շարունակությունը 3-րդ էջ

Գյուճարից մինչև Քյոնիգսբերգ



ու Խաչիկն աշխատում էր երկաթուղու Բայանդուր կայարանում, իսկ 1930-ականներին վերջին կայարանի պետ էր դարձել:

1939 թվականին Համբարյանին գորակոչեցին: Նա որոշեց համատեղել ծառայությունն ու ուսումը և 1941 թվականի հունիսի սկզբին ավարտեց ռազմական ուսումնարանը: Բնականաբար, առաջին իսկ օրվանից նա մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Առաջին վիրավորումը ստացել է հուլիսի 5-ին՝ Արևմտյան ճակատում, երկրորդը՝ սեպտեմբերի 21-ին: Այսպիսի յուրահատուկ նվեր՝ ծննդյան օրվա կապակցությամբ:

Ապաքինվելուց հետո ցրտի սովոր գյուճարեցուն ուղարկեցին կարիեյան ճակատ, որտեղի կլիմային հարմարվելը՝ նրա համար դժվար չէր: Հենց այստեղ էլ նա ստացավ բավականին հազվադեպ՝ Խորհրդային անդրբևեռային պաշտպանության մեդալ:

1944-45 թվականներին Խաչիկ Համբարյանը ևս երեք վիրավորում է ստացել: Նա անընդհատ ձգտում էր մասնացել մարտերին, թեև աղեն Առաջին մերձբալթյան ճակատի օպերատիվ կայանի պետի օգնական էր ու չորս մարտական շքանշան ուներ, որոնցից երկուսը՝ Հայրենական պատերազմի ժամանակ ստացած:

Երևանի բանակային ղեկավարությունն էլ հասկացավ, որ Համբարյանին չես ստիպի կայանում նստել: Նա մասնակցել է Սմոլենսկի, Վիտեբսկի, Հարավ-Պրուսական ու բելառուսական գրոհային գործողություններին որպես հրաձիգների գնդերի, դիվիզիաների ու կորպուսների հրամանատար:

Սակայն ինքը՝ Համբարյանը, ամենակարևոր իրադարձությունը համարում էր 1945-ի մարտին Քյոնիգսբերգի ազատագրումը հիտլերականներից, երբ հրաձիգների գնդի հրամանատար էր:

Մարշալ Վասիլևսկու մտահոգացման համաձայն՝ պաշտպանվող կայազորի ուժերը պետք է հատվեին հյուսիսից ու հարավից հասցվող հատվող ուժերին հարվածներով, իսկ գրոհը պետք է ավարտեր գործողությունը: Քյոնիգսբերգում նստած գերմանացիները բարձրացնում էին իրենց զինվորների ոգին, հիշեցնելով, որ խորհրդային զորքերն իրենց թույլ պաշտպանությունով 250 օր պահում էին Սևաստոպոլը: Նրանք ասում էին՝ մենք, գերմանացիներս, պարտավոր ենք ավելի երկար դիմակայել:

Վասիլևսկին նույն ոգով էր պատասխանել՝ 250 օր պաշտպանում էին, իսկ հետո չորս օրվա մեջ ազատագրեցին: Մարշալը ճիշտ էր գուշակել:

Քյոնիգսբերգի գրոհի համար 26 գրոհային ջոկատ ու 104 գրոհային խումբ էր ստեղծվել ինչպես հրաձիգներից, այնպես էլ ինժեներներից: Հրաձիգ-



ների գնդերից մեկի հրամանատարը Խաչիկ Համբարյանն էր:

Խորհրդային հրետանին կրակ բացեց հիտլերականների ամրացված շրջանների վրա ապրիլի 2-ին, ապրիլի 6-ին պաշտպանվողների համար դժոխք սկսվեց. գերմանացիների կայազորի վրա կրակ էր թափվում:

Գերմանացիները հուսահատ կոպում էին, կպեցնում իրենց դիրքերին, սակայն օրվա վերջում խորհրդային զինվորները կարողացան առաջ անցնել ու փակել երկաթուղին: Ապրիլի 7-ի առավոտյան բերդամարտ տապալվեց, հաջորդ օրը գերմանացիները քաղաքի կենտրոնում շրջափակման մեջ էին: Ու ամսի 9-ին ամեն ինչ ավարտված էր: Այն կախարդական չորս օրերը:

Գրոհի չորս օրվա մեջ Համբարյանն իր գնդով մաքրեց քաղաքի 9 թաղամասերը, մոտ հազար մարդ գերի վերցրեց, վերացրեց 19 հրանոթ ու 38 գնդացի ու բազում այլ տեխնիկա: Այդ սխրամքների համար գնդը ստացավ «Քյոնիգսբերգի գունդ» անունը, իսկ Համբարյանը Լենինի շքանշան ստացավ:

Պատերազմին մեկ ամիս էր մնում, բայց Համբարյանի ռազմական կենսագրությունը շարունակում էր զարգանալ նաև խաղաղ ժամանակ, ու գեներալը դեռ երկար մնում էր գործող զորքերի կազմում: Նա Մերձբալթյան զինվորական օկրուգի դիվիզիայի ու 11-րդ բանակի հրամանատարն էր, հետո որպես ռազմական խորհրդատու ծառայել է Բուլղարիայում ու Եթովպիայում: Իսկ Մոնղոլիայում ծառայության համար ստացել է Մոնղոլիայի Մարտական կարմիր դրոշի շքանշան:

Պարգևների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում թերևս ամենախոստումնալից մեդալը՝ «Անթերի ծառայության համար»: Գեներալ-գնդապետ Խաչիկ Համբարյանը ստացել է այն ԽՍՀՄ-ի Զինված ուժերի 70-ամյակի կապակցությամբ:

© Sputnik Ռուսեն Գյուլիսարյան

Խաչիկ Համբարյանը ծնվել է մեկ դար առաջ՝ 1919 թվականին, Շիրակի մարզի Նալբանդ գյուղում, սովորական գյուղացու ընտանիքում:

Ինչպես չինացիներն են ասում, գեներալ-գնդապետի կոչմանը հասնելու ճանապարհին առաջին քայլից է սկսվում: Եվ այդ առաջին քայլը պարտադիր չէ, որ կանխորոշի հետագա քայլերը: Օրինակ, Խաչիկ Համբարյանն իր ճանապարհը սկսել է Շիրակում, որպես երկաթուղու կայարանի պետի օգնական, բայց մասնակցել է Քյոնիգսբերգի գրավմանն ու գեներալ է դարձել:

Շիրակի մարզը Հայաստանում հեռավոր Հյուսիս է ոչ միայն աշխարհագրական առումով, այլև կլիմայով: Գյուղացու աշխատանքն այստեղ առանձնակի դժվար է. ցուրտ է, այն ամենը, ինչը մի հարյուր կիլոմետր այն կողմ շատ լավ բերք է տալիս, այստեղ պարզապես չի աճում: Ստիպված շեշտը դնում են անասնապահության վրա: Ամեն դեպքում, նույնիսկ մեկ հարյուրամյակ առաջ, գյուղացիների համար շատ կարևոր էր կրթություն տալ երեխաներին, իսկ ամենօրյա աշխատանքին ուղեն-չուղեն՝ կտրվորեն, ճարներն ինչ:

Խաչիկ Համբարյանը ծնվել է ուղիղ մեկ դար առաջ՝ 1919 թվականի սեպտեմբերի 22-ին, Շիրակի մարզի Նալբանդ գյուղում: Քանի որ Լենինականը գյուղին շատ մոտ էր, հայրը նրան ուղարկեց հենց այնտեղ՝ Երկաթուղային տեխնիկումում սովորելու: Հետո պետք էր կիրառել ձեռք բերած գիտելիքները,

Գործընթացը շարունակվում է

«Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության ներդրումային ծրագրի շրջանակներում 2020 թվականի սկզբին Հայաստան է մատակարարվել ընկերության կողմից նոր կիսավազոնների հերթական խմբաքանակը:

Վազոնները կծառայեն բեռների արտահանումն իրականացնելու նպատակով, ինչը կբարձրացնի փոխադրման հուսալիությունն ու անվտանգությունը, ինչպես նաև կապահովի բեռի պահպանման բարձր մակարդակ: Կիսավազոնները՝ շարժակազմի հիմնական տեսակն են, որոնք շահագործվում են «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության կողմից: 2015-2019 թվականների ընթացքում ընկերությունը գնել է 112 միավոր կիսավազոններ:

«ՀԿԵ» կողմից կիսավազոնների շարժակազմի արդիականացումը միայն ողջունելի է: Այդ

գործընթացը անհրաժեշտ է դիտարկել Հայաստանի տնտեսության զարգացման լայն համատեքստում, ինչն իր հերթին նպաստում է տրանսպորտային ծառայությունների բարելավմանը: Ի վերջո, տրանսպորտային ընկերություններն ինքնուրույն չեն զարգանում, այլ սպասարկում են բիզնեսին, արտադրությանը, առևտրին: Կարծում են, բեռնափոխադրումներ իրականացնելու համար շարժակազմի արդիականացման գործընթացը «ՀԿԵ» պատասխանն է տնտեսության և բիզնեսի փոխադրումներ իրականացնելու պահանջարկին - նշում է «Ապավեն» խոշորագույն բեռնափոխադրող ընկերության գործադիր տնօրեն Գագիկ Աղաջանյանը:

- Բեռնափոխադրումների առումով՝ «Գեոպրոմայնիզ գոլդ» ընկերությունը ավանդաբար հանդիսանում է «ՀԿԵ» ընկերության ծառայությունների խոշորագույն սպառողը: Ավելի քան 10 տարվա մեր համատեղ համագործակցությունը հավաստում է, որ երկաթուղին կարողանում է ապահովել տարեցտարի «Գեոպրոմայնիզ գոլդ» ընկերության անխափան բեռնափոխադրումներ իրականացնելու աճող պահանջարկը: Կարծում են, շարժակազմի արդիականացումը հետագայում երաշխավորում է երկաթուղային փոխադրումների կայունությունը և որակը, - նշում է «Գեոպրոմայնիզ գոլդ» ընկերության գլխավոր տնօրեն Անատոլի Գոգոտինը:

«ՀԿԵ» ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում է կիսավազոններ ձեռք բերել նաև 2020 թվականին:

Կապիտալ վերանորոգում

«Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունում սկսվել են գծերի կապիտալ վերանորոգման 2020 թվականի պլանային աշխատանքները: Ապրիլի 13-ից «Մասիս» գծային մեքենայացված կայանի բրիգադը սկսել է կապիտալ վերանորոգման աշխատանքները Լոռու մարզի Փամբակ-Շահալի հատվածում:



Ընդհանուր առմամբ ընկերության 2020 թվականի ենթակառուցվածքի ներդրումային հաստատված պլանի համաձայն, կապիտալ վերանորոգվելու է 8 կիլոմետր գիծ, տեղադրվելու է 17 հազար երկաթբետոնե կոճղ, փոխվելու է ավելի քան 13 հազար տոննա խճաքար, կատարվելու է 7 կիլոմետր հպակային ցանցի նորոգում և Հրազդան-Սևան ուղղանալի էլեկտրական կենտրոնացման կայանի արդիականացում:

«ՀԿԵ» ենթակառուցվածքի արդիականացման ընդհանուր ներդրումային ծրագիրը 2020 թվականի համար գնահատվում է 1 միլիարդ 845 միլիոն դրամ, ինչը կարող է ավելանալ 77 տոկոսով:



1-ին էջ



Հայաստանը և Համաշխարհային երկրորդ պատերազմը



շքանշաններով պարգևատրվել է 27 զինվոր:

Պատմությունը հետաքրքիր փաստ արձանագրեց՝ Չարդախլու հայկական գյուղի ռազմական սխրանքը: Այդ գյուղի 1250 բնակիչ գնաց ռազմաճակատ: Նրանցից 853-ը պարգևատրվել են շքանշաններով և մեդալներով, 452-ը՝ քաջերի մահով գոհվեցին մարտի դաշտում: Այս գյուղը Հայրենիքին տվեց երկու մարշալ (Բաղդասյան, Բաբաջանյան), 12 գեներալ և Սովետական Միության 7 հերոսներ, բազմաթիվ ավագ սպաներ: Ամենայն հավանականությամբ, 16 դար պատմություն ունեցող արցախյան Չարդախլուի նման գյուղ դժվար է գտնել ոչ միայն Սովետների մեր նախկին երկրում, այլև նրա սահմաններից դուրս:

Հայ զինվորները ծառայում էին Կարմիր բանակի բազմաթիվ ստորաբաժանումներում՝ հետևազորում, զրահատանկային ուժերում, ավիացիայում, հրետանազորում, նավատորմում, սահմանապահ զորքերում, սանիտարական և թիկունքի ստորաբաժանումներում:

Հայ զինվորների շարքերում կային ինչպես շարքային զինվորներ, այնպես էլ բոլոր մակարդակների հրամանատարներ՝ ընդհուպ մինչև դիվիզիաների, կորպուսների և բանակների հրամանատարներ:

Պատերազմի սկիզբին (1941-ի հունիսից մինչև 1942-ի հունվարը) Խորհրդային բանակում ձևավորվեցին ազգային զորամիավորումներ, որոնք հետագայում էլ ավելի ամրապնդեցին դրա մարտունակությունը:

Հայ զինծառայողներից ձևավորվել է 6 դիվիզիա: Բազմաթիվ հայեր կոչվում էին 31-րդ, 61-րդ և 320-րդ հրաձգային դիվիզիաների շարքերում, 28-րդ և 38-րդ պահեստային բրիգադներում և ստորաբաժանումներում: Հայաստանի ղեկավարությունը ր այդ զորամասերին մատակարարում էր անհրաժեշտ ամեն ինչ:

Հայ գեներալները Խորհրդային բանակի ռազմական ղեկավարների մեծ խումբ էին կազմում: Նրանցից շատերը ծառայում էին նաև տարբեր զորքերում, որոնք ակտիվ մասնակցություն ունեցան Հայրենական մեծ պատերազմում: Հիշատակենք մի քանի անուններ՝ հրետանու գեներալ-գնդապետ Մ.Ա.Պարսեգով, տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Վ.Ս.Տերմուչի (Դամրուչան), ավիացիայի գեներալ-լեյտենանտ Ա.Ա.Միկոյան, բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ա. Ի. Բունազյան, ավիացիայի գեներալ-գնդապետ Ա.Ա. Սարգսյան, բժշկական ծառայության գեներալ-գնդապետ Լ.Ա.Օրբելի, ցամաքային ուժերի գեներալ-գնդապետ Ի.Մ.Համբարյան և այլն: Այս ցուցակը կարելի է ավելի շարունակել:

60-ից ավելի հայ հրամանատարներ անմիջական մասնակցություն են ունեցել Հայրենական մեծ պատերազմի ռազմական օպերացիաների ղեկավարմանը: Նրանցից առավել նշանավորներն են Խորհրդային Միության մարշալ Իվան Բաղդասյանը, ավիացիայի մարշալ Սերգեյ Խոլոյակովը (Արմենակ Խամֆերյանց), զրահատանկային ուժերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանը, ԽՍՀՄ նավատորմի ծովակալ Իվան Իսահակով (Հովհաննես Իսահակյան):

Տասնյակ հազարավոր հայ զինվորներ պարգևների, շքանշանների և մեդալների են արժանացել: Խորհրդային Միության Հերոսի կոչումը շնորհվել է 107 զինվորների և սպաների (այդ թվում՝ հետմահու 38-ին): Հերոսի կոչմանը համարժեք Փառքի երեք

պատմություն ունեցող արցախյան Չարդախլուի նման գյուղ դժվար է գտնել ոչ միայն Սովետների մեր նախկին երկրում, այլև նրա սահմաններից դուրս:

ԽՍՀՄ օկուպացված շրջաններում ստեղծվեցին պարտիզանական միավորումներ, որոնց մասնակիցների թվում նաև հայեր էին: Դրանք Բելառուսը, Ուկրաինան, Լեհիստանը և Հյուսիսային Կովկասն էին: Ուկրաինայում գործում էր Սերգեյ Հարությունյանի «Հաղթանակ» ջոկատը: Գեներալ Նաումովի պարտիզանական խմբավորման կազմում կոչվում էր Միկոյանի անվան ջոկատը, որի հրամանատարն էր Արամայիս Հովհաննիսյանը: 1943-1944 թվականներին նրանք ոչնչացնելով ռազմական տեխնիկան, անցան 2000 կմ ճանապարհ: Նրանց հաշվին հազարավոր գերմանացի զինվորներ և սպաներ են:

Հայ ժողովրդի տասնյակ հազարավոր որդիներ մասնակցեցին հիտլերյան լծից Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Հարավսլավիայի, Ավստրիայի ազատագրմանը: Այստեղ խիզախ մահով գոհվեցին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախկին նախագահ Խաչիկ Հակոբջանյանը, մարշալ Ռիբարկոյի տանկային բանակի հրետանու հրամանատար Նիկոլայ Հովհաննիսյանը: Ռայխի մայրաքաղաքի գրոհին մասնակցում էր փառահեղ հայկական 89-րդ Թամանյան դիվիզիան իր լեգենդար հրամանատար Նվեր Սաֆարյանի հետ: Կովկասից մինչև Բելոյի դիվիզիան անցել էր ավելի քան 7,500 կմ մարտական ուղի, իր հաշվին ավելի քան 9 հազար ոչնչացված և 11 հազար գերեվարված նացիստներ են:

Ամիջապես Հայաստանի տարածքում կազմակերպվել է բանակի համար զինվորականների պատրաստում: Հանգամանքներ պահանջում էին, որ Հայաստանում կայանվի մարտական զինվորական կոնտինգենտ, քանի որ անմիջական հարևան Թուրքիան ցանկացած պահին պատրաստ էր պատերազմի մեջ մտնել Գերմանիայի կողմում:

Աշխատողները ռազմաճակատի կարիքների համար նվիրաբերեցին իրենց խնայողությունները (փող, ոսկե իրեր, պարտատոմսեր): Այդ միջոցները կազմել են ավելի քան 216 միլիոն ռուբլի, ինչը թույլ է տվել կառուցել «Սովետական Հայաստան», «Հայ մարմնամարզիկ» էսկադրիլիաներ, «Հայ կոլխոզնիկ» և «Հայաստանի կոմսոմոլեց» տանկային շանայուններ: Հինավուրց Արտաշատի կոլխոզնիկների գումարներով կառուցվել էր «Սովետական Հայաստան» զրահապատ գնացքը:

Ռազմական գործողությունների շրջաններ էր ուղարկվել 206 հազ ծանրոց-ավեր, սննդի 45 վագոններ: Գործող բանակին, ռազմաճակատին, մասնա-

վորապես տանկատներին, մեծ օգնություն են ցուցաբերել Սիյուրքի հավատացյալ հայերը՝ Գևորգ IV Չերեքչյանի գլխավորությամբ: Նվիրաբերությունների միջոցով հավաքագրվել են էական նյութական միջոցներ, կառուցվել և մեր բանակին հանձնվել «Մասունցի Դավիթ» և «Հովհաննես Բաղդասյան» տանկային դիվիզիաներ:

Մեջբերենք 1944 թվականի ապրիլի 4-ին Կաթողիկոսին ուղղված գեներալ-լեյտենանտ Կորոբկովի նամակը. «... 1944 թ. փետրվարի 29-ին հանդիսավոր մթնոլորտում N տանկային միավորմանը փոխանցվել է «Մասունցի Դավիթ» տանկային շարայունը, որը կառուցվել է Ձեր նախաձեռնությամբ՝ հայ հոգևորականության և օտարերկրյա պետություններում բնակվող հավատացյալ հայերի միջոցների հաշվին: Սպաները «Մասունցի Դավիթ» տանկերի վրա երգվեցին՝ անխնա ջարդել գերմանացի զավթիչներին: Տանկերը մեկնեցին ճակատ: Կարմիր բանակի զրահատանկային զորքերի հրամանատարի օգնական, տանկային ուժերի գեներալ-լեյտենանտ Կորոբկովը:

Ֆաշիզմի դեմ պայքարին մասնակցում էին նաև այլ երկրներում բնակվող հայերը: Սովետական զինված ուժերին աջակցելու արշավ սկսեցին ԱՄՆ-ում գործող «Ամերիկահայերի ազգային խորհուրդը», Ֆրանսիայի «Հայերի ազգային ճակատը», «Սիրիայի և Լիբանանի հայկական ազգային խորհուրդը», «Իրաքում ԽՍՀՄ ընկերների միությունը», «Հայկական մշակույթի ընկերների միություն Եգիպտոսում», «Հայկական ճակատը Ռումինիայում», «Արգենտինահայերի մշակութային միությունը», Լատինական Ամերիկայի շատ երկրներում գործող «Հայաստանի օգնության միությունը», մի շարք առաջադեմ կազմակերպություններ Կիպրոսում, Հորդանանում և այլ երկրներում:

Աշխարհասփյուռ հայությունը օգնության ձեռք մեկնեց սովետական զորքերին: Նշենք, որ պատերազմի տարիներին ամերիկյան բանակի թիկունքի ղեկավարն էր Ցեդրասպանությունից փրկված ընտանիքի գավակ Ջորջ (Գևորգ) Մարտիկյանն էր: Ավելի քան 30 հազար հայեր կոչվում էին դաշնակիցների բանակներում, որոնցից 20 հազարը՝ ամերիկյան և կանադական բանակներում: Նրանք լուրջ էին Ֆրանսիայի Դիմադրության շարքերում:

Խոսելով Հայրենական Մեծ պատերազմում հայության ճակատագրի մասին՝ մարշալ Գ.Կ. Ժուկովը գրել է. «Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում հայերը սկսեցին շարքայինից և ավարտելով մարշալով, անմահացրեցին իրենց անունները՝ խիզախ մարտիկների անմար փառքով»:

Այդպիսին է Հայրենական Մեծ պատերազմում հայ ժողովրդի արժանիքների ոչ ամբողջական ցանկը, այդպիսին է նրա ներդրումը հիտլերյան զավթիչների նկատմամբ աշխարհի ժողովուրդների ընդհանուր հաղթանակում ավանդը:

Արդյուրը՝ All Armenia



1-ին էջ

Աշխատավարձերի մակարդակը չի նվազի

«Այստեղ չափազանց կարևոր է արձանագրել, որ մեր կողմից կատարված աշխատանքի, վարձատրության ոլորտում իրավիճակի վերլուծության, արհմիութենական կազմակերպությունների հետ խորհրդատվությունների և համաձայնեցումների արդյունքում՝ հաշվարկման նոր սխեմայի ներդրումից հետո աշխատողների ներկայիս աշխատավարձի մակարդակը չի նվազի, - պնդում է տնտեսության և ֆինանսների գծով գլխավոր տնօրենի տեղակալ Ռոման Սավչենկոն: - Մեր աշխատողների պարգևատրման չափը Ճանապարհի կոնկրետ ձեռնարկության կատարողականից կախված կլինի միայն 10%: Իսկ բոնուսի չափի 90%-ը պայմանավորված կլինի աշխատվորի անհատական ցուցանիշներից»:

Ըստ Սավչենկոյի, նոր սխեման ապագայում թույլ կտա բացառել աշխատավարձի նվազման ռիսկերը Ճանապարհի արտադրության ցուցանիշների հնարավոր կրճատման (փոխադրումների ծավալների անկում) պարագայում և, համապատասխանաբար, պարգևների իջեցման արդյունքում: Բացի այդ, ինչպես ասաց գլխավոր տնօրենի



տեղակալը, նոր կանոնակարգը սահմանում է, որ աշխատողի կողմից խիստ նկատողության ստանալու դեպքում, նա պարգևավճար չի ստանա ոչ թե 12 ամիսների, ինչպես հիմա, այլ ընդամենը 3 ամսվա ընթացքում:

«Ուզում եմ ևս մեկ անգամ շեշտել այն սկզբունքային կետը, որը ընկերության ղեկավարության կողմից առաջնահերթություն է համարվում պարգևավճարների համակարգի բարեփոխման ժամանակ բոլոր աշխատողների աշխատավարձերը, առանց բացառության, չեն նվազի, անկախ նրանից, թե ինչ իրավիճակ է հետագայում ձևավորվելու բեռնավոր-խարրումների ոլորտում: Կարևորը, որ աշխատողը շարունակի բարեխղճորեն կատարել իր աշխատանքը, չխախի աշխատանքային և արտադրողական կարգապահությունը», - նշեց Սավչենկոն:

Նոր սխեմայով աշխատողները աշխատավարձեր կստանան հուլիսի վերջից և օգոստոսի սկզբից:

Փորձի փոխանակումը կայացել է

Անցած տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հարավկովկասյան երկաթուղու և Ռուսական երկաթուղիների մեքենավարները փոխանակվեցին փորձով՝ ռուսաստանցի մասնագետներն աշխատեցին Հայաստանում, իսկ հայկական մասնագետները գործողվեցին Կոպիշևի երկաթուղի: Այդ ծրագիրը ընդունվել է պարբերական բնույթի և ուղղված է երկու ընկերությունների մասնագետների որակավորման բարձրացմանը: ՌԴ գործողված մասնագետներից մեկը՝ ՀԿԵ մեքենավար Վահագն Հարությունը մեր թերթին պատմեց կատարված աշխատանքի մասին:



- Եթե չեմ սխալվում, Վահագն, դա Ռուսաստանում աշխատելու Ձեր առաջին փորձը չէ:

- Այո, 2015-16 թվականներին ես աշխատել եմ Հյուսիսկովկասյան երկաթուղու Տիմուշևսկոյ շահագործման դեպոյում որպես էլեկտրաքարշի մեքենավարի օգնական: Մենք շահագործում էինք Թխ80 սերիայի էլեկտրաքարշեր: Ես սկսեցի աշխատել որպես մեքենավար, սակայն քննություններ հանձնելուց հետո պարզվեց, որ Հայկական երկաթուղու կողմից տրված էլեկտրաքարշերի վարման վկայականը Ռուսական երկաթուղին չի ընդունում: Ինձ գործուղեցին Բեյլանի տեխպարոյ՝ ուսուցում անցնելու համար: Քննությունները հաջող հանձնելուց հետո ես ստացա ռուսական ստանդարտի վկայական: Մակայն կարող եմ վերադարձրեց ինձ :

- Ի՞նչ փորձ եք ստացել Ռուֆայում, աշխատանքն այնտեղ և այստեղ շատ է տարբերվում:

- Տարբերությունը մեծ է, թեկուզ գծի պրոֆիլից ելնելով: Հայաստանում բարդ ռելիեֆ է, ինչի հետ կապված այստեղ ավելի բարդ, բայց միևնույն ժամանակ ավելի հետաքրքիր է վարել: Գիծի թույլ չի տալիս հանգստանալ: Իսկ Ռուսաստանում անձայր բաց տարածքներ են և երկար ուղիղ հատվածներ:

Ռուֆայում մեզ լավ ընդունեցին, պատրաստ էին ամեն ինչով օգնել, սաայն քանի որ մենք ծանոթ էինք տեխնիկային, ոչ մի բարդույթ չի առաջացել:

Ռուսաստանցի գործընկերներից մեզ տարբերում է բարդ ռելիեֆում աշխատանքի մեծ փորձը: Ռուսական լոկոմոտիվներում տեղադրված են անվտանգության բազմաթիվ համակարգեր, ինչը միևնույն ժամանակում էլ լոկոմոտիվային բրիգադների սխալների հնարավորությունը, սակայն մյուս կողմից տեխնիկայի տվյալները ավելի բարձր ուշադրություն է պահանջում:

- Ո՞ր մասով է մեր փորձը հետաքրքիր ռուսաստանյան մեքենավարներին՝ այդ թվում Հայաստանում աշխատած:

- Մեծ մասով նրանց հետաքրքիր էր վարման մեր փորձը մինչև 40-հազարանոց թեքություններում, արգելական ինչ մեթոդներ են կիրառվում: Ընդհանուր առմամբ, նրանց օգտակար էր լեռնային պայմաններում մեքենավարների աշխատանքի մեր փորձը: Ես այնտեղ չվիվել եմ Հայաստան գործողված մեքենավարների հետ, նրանք շատ գոհ էին Հայաստանում աշխատանքով, սակայն խոստովանեցին, որ մեր տեխնիկայից հարթավայրերում վարելու նրանց փորձի համար բավականին բարդ էր:

Ներսես Կարապետյան. Ապրեց սիրով, գնաց կարողը սրտում:

Այս փոքրիկ պատմությունը վաղ տարիքից անասելի դառնություններ տեսած, իր կյանքի մի քանի տասնամյակները երկաթուղուն նվիրած, այս ասպարեզում իր ներկայանալի վաստակն ունեցող մի մարդու՝ Ներսես Սաուվաի Կարապետյանի սեղմ, բայց և հուզիչ ու գեղեցիկ կենսագրությունն է:

Ծնվել է 1898-ին Ղարսա Բուլանի (Բուլանը) գյուղում: Տանուտիրոջ գավակ էր: Հայրը՝ Սաուվա, համայնքում բարի անուն ուներ, գյուղի բնակչության շրջանում հարգված մարդ էր: 1915 թվականի հայտնի բռնագաղթի ու կոտորածի նախօրեին թուրք հարևանը նրան գաղտնի գզուշացնում է՝ ընտանիքը հեռացրու, վաղը հայերին կոտորելու են:

Հայրը չի հավատում, կարևորություն չի տալիս բարեկամական մտահոգությամբ ասված խոսքին, մինչդեռ վաղն իսկապես տեղի է ունենում սարսափելին: Սաուվաի մեծ ընտանիքը սրի են քաշում, քսան հոգանոց գերդաստանից փրկվում է միայն նրա Ներսես որդին, որին հաջողվում է իր երկու ազգականների հետ փախչել, հասնել Հայաստան ու ապաստանել Արմավիրի մարզի գյուղերից մեկում: Հայաստանի համար ծանր ու դժվար ժամանակներ էին: Գաղթական հայ մարդը չէր կարող անտարբեր մնալ իր հայրենիքի ճակատագրի հանդեպ ու չդառնալ այդ տարիներին ծավալված հայ ազատագրական շարժման մասնակիցը: Ներսեսը զինվորագրվեց այդ շարժմանը, Հովհաննես Բաղդասյանի հրամանատարությամբ գործող գործախմբում մասնակցեց Մարդարապատի ճակատամարտին: Մարտերից մեկի ժամանակ ծանր վիրավորված իր զինվորին բուժմաս է տեղափոխել ինքը՝ հրամանատարը, որից հետագայում շվեցարական ժամացույց է նվեր ստացել: Որդու՝ Երվանդ Կարապետյանի խոսքով, զավակներն այսօր էլ այն պահպանում են, որպես թանկ մասունք, իրենց հոր կենսագրության թանկ մի պատահիկ: Ի պատիվ նրա՝ հավելենք, որ Ներսեսը կովել է նաև Ջորավար Անդրանիկի հրամանատարությամբ, որը ևս նկատվել ու վավերացվել է: Իսկ վավերագիրը Ջորավարի դիմանկարով հուշամեդալն է, որն իր մնայուն տեղն է գտել Երկաթուղու պատմության թանգարանի ցուցադրություններում, և որտեղ մեր հերոսն ունի իր հուշանկյունը: Որդին չի մոռանում հիշել, թե ողջ կյանքում ինչպես էր հայրն հպարտանում երկու մեծ գորավարների հետ ունեցած իր հանդիպումներով ու առնչություններով: Ներսեսն անմասն չի եղել և խորհրդային հայրենիքի պաշտպանությանը: Հայրենական պատերազմի տարիներին, որպես հաշմանդամ, նա ծառայել է թիկունքում՝ զորակոչվելով Թբիլիսի:

1955 թվականին Ներսես Կարապետյանի ընտանիքը մշտական բնակություն է հաստատել Անի կայարանում, որտեղ էլ անմիջապես աշխատանքի է անցել երկաթուղում, որպես գնացք կազմող: Նրան ճանաչողներն այսօր էլ հիշում են, թե ինչպիսի մեծ պատասխանատվությամբ ու ճշգրտությամբ էր կատարում իրեն վստահված աշխատանքը, որքան լավ էր տիրապետում իր գործի նրբություններին: Երկաթուղու աշխատակից էր նաև կինը՝ Ծաղիկը: Տիկինը մաքրուհի էր, նրա աշխատանքը բոլորին գոհացնում էր, հիացմունք պատճառում: Կայարանի սպասարանի, առհասարակ տարածքը Ծաղիկի



Ջորավար Անդրանիկի զինվոր, Անի կայարանի սպաքավար, գնացք-կազմող Ներսես Կարապետյան (Ջորավար Անդրանիկից աջից երկրորդը)

օրնիբուն աշխատանքով օրը բոլոր իր մաքրությամբ ասք էր շոյում: Գյուղում նա հայտնի էր նաև իր ձեռնաշնորհությամբ ու բարեսրտությամբ: Մեկի տանը ուրախություն կար խնջույթ ու հարսանիք, սեղանի հացը՝ ավանդական լավաշը, թխողը Ծաղիկն էր: Ձեռքը լավ է, -ասում էին,- սիրտը բարի: Ամուսիններով երկար աշխատեցին երկաթուղում, պատվո՞վ աշխատեցին՝ բազմիցս արժանանալով պարգևների ու խրախուսանքների: Գնացքով խորհրդային երկրի ցանկացած վայր ամենամյա ուղևորությունն էլ կար ու կար:

Ընտանիքը կորցրած մարդը ընտանիքի պաշտամունք ուներ: Ուշադիր ու նվիրված ծնող եղավ իր չորս զավակների համար: Ուսումն ու կրթությունն հարգող մարդ էր: (Հայրս ոչինչ չլինայեց, որ մենք կրթություն ստանանք, ինչպես ինքն էր ասում՝ մարդ դառնանք: Ամբողջ կյանքում նա մեզ թևույթներ էր տալիս: Խիստ ու պահանջկոտ մարդ էր, բայց և շատ բարի, արդարամիտ ու ավանդապաշտ: Իր ծննդավայրը, իր վաթանը երբեք մոռնից դուրս չեկավ: Երազում էր՝ մի անգամ, մեն մի անգամ ոտքս դնեմ էդ հողին, կարոտս ամենն ու... Ապրեց (երգրի) կարոտով ու կարողությամբ՝ գնաց աշխարհից),- այսպես է հորն հիշում ու պատմում Երվանդ որդին:

Կյանքն արժանապատիվ ապրեց. նվիրվեց իր աշխատանքին ու ընտանիքին, երջանիկ եղավ իր զավակներով, իր տառը թողնելով, որոնք բոլորը գերդաստանի ավագի արժանավոր շառավիղներն են, պապի պատգամներով ապրող, նրա սերմանած ավանդույթներն արժանապատվորեն պահպանող, պատվով ապրող ու արարող մարդիկ: Ահավասիկ, Երկաթուղու պատմության թանգարանի տնօրեն Նիկողայոս Գրիգորյանի ջերմ խոսքը Ներսեսի թոռներից մեկի՝ Լիաննա Կարապետյանի մասին, որ «Աստղիկ» բժշկական կենտրոնի արյան փոխներարկման բաժնամունքի բուժքույր է: Տնօրենն անթաքույց երախտագիտությամբ և շնորհակալանքի ու հիացումի զգացումով է խոսում նրա պրոֆեսիոնալիզմի, մարդկայության, մեծ պատասխանատվության ու հոգածության մասին, որի ակնաստեսն են և որին արդեն երկար տարիներ Աստծո ամեն օր արժանանում են ինքը և բոլոր մյուս հիվանդները: Լսում ենք Նիկողայոս Գրիգորյանին ու մտածում. մի՞թե սա պապի գործի շարունակությունը չէ, մի՞թե սա էլ ծառայություն չէ երկաթուղուն, երբ դու օգնում ես երկաթուղայինին՝ մասնագիտորեն ու մարդկայանորեն հոգավոր նրա առողջական խնդիրները:

Մասնաձև Մարտիրոսյան

Իսկական ռևիզորը

Պատասխանատվությունն ու ուշադրությունը լավ երկաթուղային մասնագետի հատկանիշներից են: Նրանց առկայությունը նպաստում է ոչ միայն մասնագիտական պարտականությունների որակյալ կատարմանը, այլև երբեմն թույլ է տալիս խնայել տեխնիկական ու սարքավորումները, իսկ որոշ դեպքերում նույնիսկ մարդկանց առողջությունը և կյանքը:

Անցյալ տարի «Հայաստանի երկաթուղային»-ը գրել էր «Սևան» ԳԿՄ Շորժա հենակետային կայարանի հերթապահ Ջահան Մարիբեկյանի մասին, ով օգոստոսի 7-ին Շորժա-Ծովագյուղ հատվածում ժամանակին նկատել է անցնող գնացքի վագոններից մեկում բռնկված կրակը: Նրա ուշադրության շնորհիվ գնացքը ժամանակին կանգնեցվեց, ինչը թույլ է տվել խուսափել հնարավոր վտանգավոր հետևանքներից և ապահովել երթևեկության անվտանգությունը:

Այս տարվա ապրիլի 23-ին, N6512/6511 մերձբաղադային



վիթ վագուրում հայտնաբերել է տրանսֆորմատորից ելնող մատվի բռնկումը և և դրա մասին անմիջապես տեղեկացրեց դիսպետչերին՝ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու համար: Այսպիսով, Պետրոսյանը կանխեց տրանսֆորմատորի հնարավոր հրդեհը, ինչը էական նյութաան վնաս կարող էր պատճառել ընկերությանը:

ՀԿԵ գլխավոր տնօրենի հրամանով Վիլիկ Պետրոսյանին շնորհակալություն հայտնվեց:

Էլեկտրագնացքը ուղեկցող Փոխադրամենի տնօրենության ճանապարհային ռևիզոր Վիլիկ Պետրոսյանը գտնվելով մեքենավարի խցիկում, Մասիս-Նորագա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹՈՂԱԿԻՆ
ՀԿԵ ՓԲԸ-ի
կորպորատիվ թերթ

Խմբագրական խորհուրդ
 Գնորդի պատասխանատու
Ռուբեն Գրիգորյան
 Լուսանկարները
 Գարություն Նազարյանի
Խմբագրության հասցեն
 ԳՂ, Երևան, Տիգրան Մեծի պող. 50
Ֆեքս: +374 10 57 50 02
Էլ. փոստ: pr@railway.am,
 ukzhdpressoffice@inbox.ru

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ
Տպաքանակը՝ 1000 օրինակ
Ստորագրված է տպագրությանը
 07.05.2020

Տպագրված է
 «Կոլլաժ» ՄԴԸ հրատարակչությունում:



Локомотив вашего бизнеса

www.ukzhd.am

ЯНВАРЬ-МАЙ, 2020 г. #19 (66)

С ПРАЗДНИКОМ
ПОБЕДЫ!

Железнодорожник АРМЕНИИ

Газета
ЗАО ЮКЖД



9
мая



Дорогие ветераны, коллеги!

9 мая мы отмечаем 75-летие Великой Победы – нашей Победы в Великой Отечественной войне. Это действительно наша общая Победа, вклад в которую внесли наши предки. На пространстве бывшего Советского Союза практически нет ни одной семьи, которую война обошла бы стороной: 26 миллионов жизней – огромная цена, которую заплатил советский народ. И в каждой семье свои герои, которых помнят и чтят до сих пор уже новые поколения.

В этот день мы вспоминаем тех, кто остался на полях сражений, кто в тяжелые военные

годы работал в тылу, в госпиталях, на заводах, кто после войны налаживал мирную жизнь и поздравляем наших дорогих ветеранов, благодарим их за подаренный нам мир.

В годы Великой Отечественной войны железнодорожники перевезли 20 миллионов вагонов, обеспечили весь процесс эвакуации населения и производств в тыл, восстановили и построили заново 120 тыс. км пути.

Неоценим вклад в Победу армянского народа: более 60 генералов – армян командовали крупными соединениями Красной армии. Имена Ивана Баграмяна, Сергея Худякова, Амазаспа Бабаджаняна, Ивана Исакова и многих других навсегда вписаны в историю.

